«Ցիշատակ է գիրքս ի սբ. Ծնունդն Հայոց վանքն ս. Աստծին եկեղեցին, ով ոք որ ընթեռնու և օգտի Աստ. ողորմի ասացէք գիրքս գծողին տէր Մարտիրոս սուտ աբեղային և տանս աշխատաւոր Եղիա վրդպ.ին և տէր Խաչատուր սբ. ճգնաւորին և այլ հասարակ միաբան եղբարց մեծի և փոքու։ Գրեցաւ թվին ՌՃԾԲ (=1703) Ցունվար ա...ուրբաթ. այս ամն յոյժ խառնակութիւն է առաջնորդաց. Աստ. խաղաղութիւն տացէ իւրեանց։» Սոյն ձեռագիրը ՌՃՁԹ (=1740) կը նորոգէ Դաւթ վրդ. Եւդոկիացին, «ս. Ծննդեան ի դուռն ս. Աստ.ածնի»։ (Խաչ. Ցուց. տեսր Իե. էջ 1903)։ ՄՁ. Թ. 1925 ձեռագիր Աստուածաշունչին մէջ Դաւիթ եպիսկոպոսի յիշատակարանին ներքև, Մարտիրոս աբ. մանր բոլորգրով առանց թուականի կը գրէ հետեւեալը. «ըստ նախնեացն և զիմ ծնողացն ողորմի ասացէք. կորադէմ Մարտիրոս աբեղայս ոչ սակաւ աշխատութեամբ գրեցի զներքի լուսանցքին անուանս, հր, կտակաց. զի առանց աշխատանաց գիւրաւ գտցի սիրով խնդրողաց»։ Թերեւս նոյն անձն է նաև ՄՁ. Թ. 480 ձեռագիր Հաւաքածոյին գրիչը Մարտիրոս աբ. Թոխատեցի, որ 1720ին ընդօրինակած է զայն (տեղն՝ անորոշ)։

ՄԱՐՏԻՐՈՍ ԱԿՆՑԻ (ԿԱՄՐԿԱՊ.)— Ցիշատակարանի մը համաձայն կողակիցը մհտ. Տիրուհին, որդին՝ մհտ. Վարդերես 1754ին սբ. Յակոբի կը նուիրեն ոսկիէ սկիհ մը յիշատակ նընջեցելոց (Ցուց. պ.)։

ՄԱՐՏԻՐՈՍ ԱՄԻՐԱՑ ՍԱԽԱՑԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.—Ս. Գլխագրի մատրան նուիրած է մէկ Զախմոց արծաթի վարագոյր, (Ցուց. Պե. Թեոդորոսի, 1817)։

ՄԱՐՏԻՐՈՍ Յ. ԱՆԱՆԻԿԵԱՆ (ԲՐՕՖ.) ՍԵԲԱՍՏԱՑԻ. — Ծ. 1875 ին, աշկ. Այնթապի Կեդր. Թուրքիոյ Գոլէճին, յետոյ Ամերիկա երթալով Springfieldի Միջազգային գոլէճին մէջ կը հետևի դասական լեզուներու, 1897-1899ին. կը շարունակէ իր ուսումը Հարթֆըրտի աստուածաբանական ճեմարանին մէջ 1899-1902. ժամանակ մըն ալ Պէրլինի և Լայպցիկի համալսարանները կը յաճախէ և յետոյ չկրնալով Այնթապ երթալ քաղաքական պատճառներով կը մնայ Պուլկարիա, ուր Վառնայի Ազգ. Վարժարանին մէջ ուսուցչական պաշտօն կը վարէ 1904-5. 1905ին իբր փոխ-գրապահ և իբր ուսուցչապետ պատմութեան և թուր-